


ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՌԱՒՅՈՒՆ



ԲԱԲՈՒ ԱԶԵՐՆԵՐ 1949





Handwritten text in blue ink, possibly a date or reference number, located in the lower-middle section of the page. The text is partially obscured by a curved line and is difficult to decipher.

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Լ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

~~25123~~

A I
7937



Ա Ջ Ե Ր Ն Ե Շ Ր
Բ Ա Բ Ո Ւ - 1949

Գ Ն Ա, Թ Ռ Չ Ն Ա Կ Ս

Կապուլտ երկնքով հրաշք մի թռչուն
Երազներիս հետ հեռու կսուրար:

— Ի՞նչ հավք ես, — ասի, — և ուր ես թռչում
Դու այդպես հպարտ և այդպես ուրախ:

Ի՞նչ գոհարներ ես թևերիդ շարել,

Խոսիր հոգուս հետ, թռչնակս, խոսիր,

Ո՞ր հեքյաթից ես դու ծնունդ առել

Եվ ի՞նչ հմայքով ինձ կախարդեցիր:

— Ես սերն եմ, — ասաց, — քո ժողովրդի,

Տեսնում ես, բախտից թևեր եմ առել,

Գնում եմ փարվեմ ես առաջնորդին,

Որ երջանկության արևն է վառել:

Ինձ հետ օրհնանքն եմ տանում մայրերի,

Գոհար արցունքը նրանց խնդության,

Բուրմուռնքն հմ տանուամ մեր գարուռնների,
Մանկանց ժպիտն հմ տանուամ հմ նրան:

— Գնա, թռչնակա, գնա դու բարով,
Առ իմ սիրտն էլ տար թևերիդ վրա,
Այնտեղ կարոտիս բացավառ հրով
Պայծառ անուռնն հմ քանդակել նրա:

Ե Ր Կ Ի Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի

Տրված է ինձ սիրտ, որ ես անթեղեմ
Քո անամար սերը, կրակն իմ հողու,
Որ քո կարոտի հրով բորբոքուն
Իմ պոետական խոսքը ջրդեղեմ:

Տրված են աչքեր, որ ես հիանամ
Քո գեղեցկության պայծառ աստղերով,
Որ սուզվեմ փառքիդ անհունը գերող,
Կախարդվեմ քեզնով, քեզնով լիանամ:

Տրված է ինձ կյանք ու կորով համառ,
Որ քեզ անհամար գարուններ բերեմ,
Որ ջահելությունն իմ զոհաբերեմ
Քո բախտի, սիրո ու փառքի համար:

ԳԱԶԵԼ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԻ

Խաղաղության ծիծառներն իրենց թավիշ թևերին
Հինգ նոր գարուն կբերեն, նոր ցնծություն կլինի:

Նոր արշալույս կբերի ամեն գարուն իրա հետ,
Ամեն սրտում, ամեն տան երջանկություն կլինի,

Կհուրհրան զաշտերը դեղին բոցով արտերի,
Եվ ամենուր ծով բարիք, ծով լիություն կլինի:

Ու կծաղկեն բարերեր այգեստաններն իմ երկրի:
Ամեն այգում լուսահանչ կուռնկի բուն կլինի:

Մարդու երազն առած ձև, լույս դղյակներ կդառնա,
Ուր կյանքը՝ փառք, ապրելը՝ երանություն կլինի:

Ու վար կիջնեն աստղերը—մեր տներում կշողան,
Մեր սրտերն ու մեր հոգին լույսով լեցուն կլինի:

Մենք երկիրը կպատենք պողպատակուռ զրահով
Եվ անդրավ բերդի պես նա միշտ կանդուն կլինի:

Ի Մ Մ Ա Ն Կ Ի Կ Ը

Իմ մանկիկը աշխարհ եկավ,
Գարուն բերեց նա իր հետ,
Ու թվաց, թե իմ ոսկեգահ
Մանկությունը դարձավ ետ:

Ծաղկում է նա կրծքիս վրա
Եվ հպարտ է իմ հոգին,
Որ կյանքի կայծ տվի նրան,
Արև տվի թանկագին,

Որ լույս լինի ուղին նրա,
Լինի պայծառ, ոսկեխինոզ,
Որ, երկիր իմ, միշտ հուրհրա
Նրա աստղը քո գլխին:

Բաց դու գիրկը քո սիրակեց
Եվ ընդունիր իմ մանկան,
Նրա մեջ է իմ սերն առ քեզ,
Իմ անցյալն ու ապագան:

Հ Ա Ղ Թ Ա Ն Ա Կ Ի Տ Ո Ն Ը

Շողացիր փառքի հազար աստղերով
Իմ հոգում և ողջ աշխարհի վրա,
Քեզ մենք վառեցինք մեր սրտի հրով,
Հաղթութեան արև, շողա, հուրհրա:

Այսօր ցնծութեան տոն է իմ սրտում,
Ես, որ սովոր չեմ արցունքի, լացի,
Ես, որ գիտեի տոկալ անտրտում,
Ծով խնդութեանից արդ հեկեկացի:

Դուրս եկա փողոց, — սրտիս հետ զարուն
Գարնան հովերն էլ ուրախ հեացին,
Անծայր մովերը երկնակամարում
Խնդութեան ոսկե ծովեր թվացին:

Անցնում էր արդեն մութն ականակիր
Եվ բացվում այդը, որպես դրոշակ,
Այն լուսարացն էր մեր հաղթանակի
Շողշողում, որպես նոր կյանքի գուշակ:

ԲԱԼԼԱԴ ՄՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ՄԱՍԻՆ

Այգեպան էր որդին նրա,
Կռիվ գնաց, տուն չեկավ.
Սև մուժ իջավ այգու վրա,
Մոր աչքերին քուն չեկավ:

Խնամել էր որդին սիրով
Ամեն մի թուփ, ամեն ծառ,
Ոսկեջրել իր հուշգերով,
Տվել իր սիրտը պայծառ:

Գնաց որդին ու նրա հետ
Շատերը տուն չդարձան,
Բայց մնում է այգին հավետ,
Որպես փառքի հուշարձան:

Կանաչում է հողը խնդուն,
Կանաչում է և այգին,
Որ միշտ կանաչ մնա որդու
Հիշատակը թանկագին:

Ու պահում է մայրը այգին,
Ինչպես որդուն հարագատ,
Ողջունում է նա ցնծագին
Գարնան օրերը ադատ:

Երբ ծաղկում է այգին նորից,
Առվակն ուրախ կարկաչում
Ու թվում է, թե ջրերից
Որդու ծիծաղն է հնչում:

Նա է ամեն թիից նայում
Կարոտով խոր ու անտակ,
Ծաղիկները այն հմայուն
Իր աչքերն են կապուտակ:

Նա է ավել ժպիտն իրա
Մորիներին այն բերկրուն,
Երկնասլաց բարդին նրա
Հսկարտությունն է կրում:

Եվ այգին այդ համայնական
Կանաչում է մոր սիրով,
Լցնում է սիրտը մայրական
Նա երջանիկ հույսերով:

Կանաչում է հողը խնդուն,
Կանաչում է և այգին,
Որ միշտ կանաչ մնա որդու
Հիշատակը թանկագին:

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Դարձել եմ ահա ես հեռուներից
 Եվ վառվառում է սիրտս կարոտում,
 Հայրենի հողն է գգվում ինձ նորից,
 Հայրենի գետը շուրջս սրտոտում:

Ամեն ինչ այստեղ քաղցր է, ինչպես
 Ջերմ գգվանքներն իմ սիրած աղջկա,
 Այս հողը, քարը, այս լեռները վեհ,
 Բոլորը, հոգիս, բոլորը, ինչ կա:

Այստեղ արևը գոհար է ցողում,
 Մորս օրհնանքն եմ ես այստեղ լսել,
 Թողեք համբուրեմ ամեն մի ցողուն,
 Որ իմ հայրենի հողումն է բուսել:

Թողեք գրկեմ այս թիփերն անհամար
 Ծառերն այս՝ կքված անսպառ բերքից,
 Օ, հազար անգամ քաղցր է ինձ համար
 Մեր աքլորի կանչն օտարի երգից:

Ահա բարդին մեր ինչ լավ է շրջում,
հեքիաթ է թվում խռոցը նրա,
Ասես մորս սուրբ օրորն եմ հիշում,
Որ ասել է նա օրոցքիս վրա:

Այն երազներն եմ ես հիշում կրկին,
Որ թողել է նա իմ երազ հողում,
Դրա համար եմ ես սիրում բարդին,
Դրա համար է նա ինձ բորբոքում:

Թ Մ Թ Ո Ի Լ Հ Ո Ի Ր Յ Ս Ն Ի Ն

Ձմեռն անցել է, ձնհալ է նորից,
Ու բաց են բոլոր ճամփեքը հիմա,
Նորից գարունն է նայում լեռներից,
Գարունը կանաչ ու հողեհիմա:

Հայրենի ծուխը ամեն երգիկից
Պարզել է դրոշն իր խաղաղության,
Կանչում է քեզ, եկ, եկ, իմ սրտակից,
Թող հնչի նորից երգդ ցնծության:

Գիտեմ, չես կարող, չես կարող չգալ,
Ինչպես չի կարող չծագել արփին,
Ինչպես չի կարող չվերադառնալ
Ծիծեռնակը, երբ գարուն է կրկին:

Դու կգաս, ինչպես գարունն է գալիս,
Հախուռն երգով, հույզերով բուրյան,
Նորից քնարը քո շունդակից
Կըրգի մեր այս պայծառ առօրյան:

Ու կըողջունեն քեզ սիրով անմար
Արևը, հողը, դարունը պայծառ,
Որոնց խնդության ու փառքի համար
Գեղեցիկ մահով դու անմահացար:

«ՆՐՋԱՆԻԿ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ» ՇԱՐԻԻՑ



Գրիմել է ինձ ժամանակն անտես,
Անջինջ խորշոմներ ճակատիս հանել,
Մազերիս ճերմակ փոշի է ցանել
Եվ տվել ահա ինձ ուրիշ մի տեսք:

Բայց խնդությունն իմ խորն է ծովի պես
Եվ իմ հոգում դեռ արև է, դարուն,
Թվում է՝ ջահել դերասան եմ ես
Եվ տարեց մարդու դեր եմ կատարում:



Երբեք չեմ եղել ես այսքան ջանել,
Թեև անցնում են օրերս արագ,
Ես այս նոր գարնան համար եմ պահել
Այսքան խիստ ու կորով, այսքան կրակ:

Ճերմակում եմ թեև, փույթ չէ երբեք,
Չէ՞ որ ձյունն էլ լեռան ճերմակ է շատ,
Իսկ ձյուներում ձմռան, ինչպես գիտեք,
Չնձադիկն է ծաղկում—գարնան գուշակ:

52/23

* * *

Հոսում է ժամանակը ջրի պես անկանգ,
Դեմքիս առուններ թողած, մազերիս՝ փրփուր,
Բայց սիրում եմ հորից և օրհնում քեզ, կյանք,
Դու ակնադրյուր խնդության, դու իմ բախտի դուռ:

Թող ծաղիկներն իրենց բույրով հմայեն,
Կանաչները թարմությամբ իրենց ցողունի,
Ովքեր կուզեն՝ թող նրանց հախանձով հայեն—
Ճերմակահեր Մասիսն էլ իր հմայքն ունի:

A 7937



Ն Ի Ո Ւ Ր Յ Ո Ւ Ն

(պոեմ)

Արևը հողնած թիկնեց սարին,
Եվ ոսկեգօծեց այգի, պուրակ,
Զարվարդի բակում կանաչ ծառին
Հարսանիք արին հավքերն ուրախ:

Յոթ անգամ ելավ Զարվարդը դուրս,
Նայեց ճամփեքին կարոտ աչքով,
Արդյոք, լուր չկան սիրած որդուց,
Այն ով է գալիս կանաչ մարդով:

Պատվի են կանգնել ճանապարհին
Ծառերը շարք-շարք և ուս-ուսի,
Լողում էր կարծես գյուղն այդ պահին
Ոսկե շողերում վերջալույսի:

Ահա գուզվել է հոճին բակի,
Պճնել ճակատը իր ոսկեվարս,

Գլխինս պսակ է դրել ծաղկի
Ծիրանինս, որպես ջահել մի հարս:

Շուտով կհասնի կեռասենինս,
Բերքինս չի լինի թիվ ու համար,
Իսկ երկինքնս, ինչպես կապույտ սինի,
Փռվել է ասես մրդի համար:

Կդառնա որդինս, կգա իր տունս,
Կլինի շքեղ մի հարսանիք,
Եվ վիշտ չի մնա էլ մոր սրտում,
Կապրի նա անհող ու երջանիկ:

Էլ ինչի՞ մասինս նա մտածի,
Ապրի կոլխողը, քանի նա կա,
Կարիք չի դգա ցորեն հացի,
Իսկ ուրախություննս ինքը կգա:

Երբ նրա որդուն տարան բանակ,
Կովի այն անեղ, այն սև տարինս,
Չարվարդը ունեի մի հին տնակ—
Մի ժեռ քար ընկած ճանապարհինս:

Կոլխողը սիրուն տուն կառուցեց,
Եվ այգի գցեց նրա համար,
Կով տվինս նրանս, կովը ծնեց,
Առատ կաթ կտա ամբողջ ամառ:

Այսպէս խորհում էր Չարվարդն ուրախ,
Կանգնած իր նոր սրան պատշգամբին:
Երկինքը ջինջ էր, օդը՝ խաղաղ,
Բուրմուռնք էր բերում հովը հանդի:

Մեկ էլ փողոցում ճչաց մի կին,
Բարձրացավ աղմուկ, իրարանցում,
Հետո շրջխկաց դուռը բակի,
Լավեցին ձայներ խառն ու ցնծուն.

— Աչքդ լույս, Չարվարդ, բախտավոր կին...
Ու նա չիմացավ, թե ոնց հանկարծ
Գիրկն առավ որդուն, սեղմեց կրծքին,
Ուրախութունից քիչ հեկեկաց,

Հետո համբուրեց նա քնքշաբար
Որդու ճակատն ու աստղը ոսկե
Ու դարձավ նրան հոգով հպարտ.

— Թող հալալ լինի իմ կաթը քեզ:

Ու հավաքվեցին ահա բակում
Ընկեր, հարևան, աղջիկ ու կին,
Եկավ ողջ գյուղը — խինդը հոգում —
Ողջունելու քաջ իր զավակին:

— Մեր պարծանքն ես դու, — ասաց Մոսին —
Գյուղի դարբինը ճերմակահեր, —

Թերթում կարգացի ես քո մասին
Եվ ինձ զգացի նորից ջահել:

Այստեղ է, ասի, նա մեծացել,
Օրհնվի ջուրը մեր լեռների,
Այստեղ գութան է մեղ հետ լծել,
Մեղ հետ խնամել մեր գառներին:

Հիմի հերոս է դառել տղան,
Ամեն տեղ ունի անուն ու փառք...
Հաստատ մնա թող մեր տերության,
Մեր իշխանության օրհնքն արդար:

Եվ այսպես կանաչ այն բուրբուռ,
Անուշ խոսքերով, ժպիտով վառ,
Շատերն էլ իրենց սրտի խորքում,
Իրենց աչքերի հրով անմար

Ողջունեցին քաջ այն լեռնացուն
Ու ավին նրան ծաղկեփնջեր:
Իսկ աղջիկները, խինդով լեցուն,
Սրտի թրթիռով, կարոտով ջերմ

Նայում էին լուռ ու մտածում՝
Ո՞ր բախտավորին նա կսիրի.
Ամեն ոք թաքուն սեր էր տածում,
Բորբոքում կրակն իր հույսերի:

Մինչ խորհում էին նրանք թաքուն,
Ողջունում սրտանց քաջ տղային,
Զարվարդը սեղան բացեց բակում
Ծով բարիքներով կոլխողային:

Տապակեց հավեր, ոչխար մորթեց,
Տարածվեց հոտը խորովածի,
Զրի պես առատ գինին հորդեց...
Լիքն էր և տաշտը ցորեն հացի:

Կերան, խմեցին մինչ ուշ գիշեր,
Կենացներ ասին հազար ու մի,
Պատմեցին կովից քանի հուշեր,
Որ հրաշքներ են թվում հիմի:

Ու երբ հյուերերը ելան փողոց,
Դրսում գիշեր էր լուսաշաղախ,
Նրանք հիացան գարնան ցողով
Եվ լուսնի շողով—այնքան խաղաղ:

Երկինքը նրանց հեքյաթական
Մի արոտավայր թվաց անձիր,
Աստղերը—հոտեր համայնական,
Որ արածում են փռված ցանցիր:

Լուսինն էլ ասես հովիվ էր մի,
Որ, ուսին առած գորշ յափնջին,

Հսկում էր նրանց այդ ուշ ժամին,
Թիկնած լեռների կանաչ լանջին:

* * *

Նայեց արևն ամպի տակից
Նվ ամպը քնքուշ ու հեզ՝
Հողի, ծաղկի կարոտանքից
Շառագունեց հարսի պես:

Հանդի վրա ուրախության
Գոհար—արցունք նա թափեց
Ու հալվելով անտես, անձայն,
Կանաչները սաղափեց:

Սուսկի հոտ է բուրում հողից
Ու վաղորդյան օդն անուշ
Հարբեցնող է, ինչպես օղի,
Ինչպես գինի քաղցրանուշ:

Խրճիթների դռներն անա
Հորանջելով բացվեցին,
Ու ճամփեքը նորից անհագ
Կյանքով, խինդով լցվեցին:

Ահա մեղր է քամում մեղուն,
Ծիտն իր համար բուն շինում,

Փայտփորիկը ծառն է պեղում,
Սարդը՝ ոստայնն իր հինում:

Ծաղիկներն է ոսկեղօծում
Արեգակի շողն անուշ,
Տերևների կանաչ բոցում
Կեռասներն են շիկանում:

Աշխատում է ամեն մեծիդ,
Ամեն շնչող արարած,
Աշխատում են թույլ և ուժեղ՝
Իրենց խիսդը ծով արած:

Արթնացել է կարենն արդեն
Ու դիտում է նա ճանաչ
Այգիները, ճամփեքը թեն,
Ծառուղիները կանաչ:

Ճամփեքով այն ծաղկափթիթ,
Իրենց ուժերին վատան,
Անց են կենում ահա մարդիկ
Քայլերով կուռ ու հաստատ:

Ու դոփում են ճամփան հանդի,
Կոփված արևի բոցով,
Առած մանգաղ ու գերանդի,
Իաշար լցնում զնգոցով:

Ու տանում են ասես նրանք
Դեպի պայծառ ապագան
Ծիածանը սակեերանդ,
Որպես դրոշ հաղթական:

Ասես սիրտն է նա կարենի
Այնպես վառվում այդ պահին,
Կարոտել է նա գուժանի,
Կարոտել է նա բահի,

Կարոտել է նա մայր հողին,
Նրա մարդկանց արևառ,
Նրա բույրին, շաղին, շողին
Եվ գարունքին նրա վառ:

Ու դուրս եկավ նա մտախոհ,
Քայլերն ուղղեց դեպի հանդ,
Խոնարհվեցին լեռները խող,
Ժպտաց հողը արգավանդ:

Արտը սիրոց—դեղին մետաքս—
Կենացներ էր հոփս ասում,
Ամեն հասկը—լիքը մի թաս—
Նրա գալուն սպասում:



Անցա՛վ կանաչ արտի մոտով,
Հասկերն ասին. — բարով եկար,
Կարմիր կանաչն ընկա՛վ ոտով,
Գրկեց նրան երկա՛ր-երկա՛ր:

Ծաղիկները շշնջացին.

— Կարմիր-կանաչ նարոտ ենք մենք:
Հողն ու ջուրը տրտնջացին,
— Քո մատներին կարոտ ենք մենք:

Հովերը լուռ եկան, անցան,
Շրթունքներին՝ երգը հացի,
Ցողը ասաց. — ուրախու՛թյան
Արցունքն եմ ես քո սիրածի:

Իսկ ծիածանն ասաց. — անցիր,
Քեզ հաղթական կամար եմ ես, —
Եվ աղմկեց արտը անձիր.
— Քո խնդու՛թյան համար եմ ես:



Ու քայլում է նա հպարտ,
Խնդու՛թյամբ լեցուն,
Դիտում կանաչ այգի, արտ
Ու լուռ մտածում,

Որ մեր թափած արյունը
Իզուր չի կորել.
Ահա նորից գարուն է,
Երջանիկ օրեր:

Եվ ժպտում են երկինքը,
Հողը՝ ցողով թաց,
Կոլխոզնիկի քրտինքն է
Այն մարգարտացած:

Տես, շողում է այգը վառ
Այնպես ցնծագին,
Նման չէ նա երեկվա
Արևածագին:

Կամուռնիզմի դրոշմ է այն,
Հանց այգը հրատ,
Բացվում է մեր ու համայն
Աշխարհքի վրա:

Եվ նրանից ամեն ցող
Վառվում է, թովում,
Ամեն մի հասկ ծխացող
Մի մոմ է թվում:

Կապույտ ծխի, հրի մեջ
Այդ համատարած

Թափառում է հոգին անվերջ
Իր շվին առած:

Սուլում է և այդ անլուր
Երգին ունկընդիր,
Մի աղջիկ է շրջում շուռ
Մտքերի հետ իր:

Ու թրջվելով վաղահաս
Արտերի ցողում,
Տրորում է նա մի հասկ,
Պակում մի ցողուն:

Ճորնի ամեն մի հասիկ
Մի պող է վառած,
Նա կրակն է իր սրտի,
Որ մարմին առած,

Մոտեցնում է դալիքը
Իր ամեն հասկով,
Եվ ամեն հասկ, որ լիքն է
Դեղնահաստ ոսկով,

Հետքն է կրում իր վրա
Կոլեկտիվ շնչի,
Այդ հասկն ունի և նրա
Մասնիկը չնչին:

Դրանից է աղջկա
Սիրտը թրթռում,
Դրանից մեծ բախտ չկա
Արար աշխարհում:

Տես, ոսկուց են քիտերը
Հասուն հասկերի,
Կարծես հրե ցայտեր են
Ճառագայթների...

Ո՞վ է տեսել այդպես արտ
Այս լեռնագոտում...
Ազրոնոմը նորավարտ
Նայում է, ժպտում:

Ջերմոցում է աճեցրել
Սերմերը նրա,
Գիշերն արթուն լուսացրել
Գրքերի վրա:

Ձի հեռացել օրերով
Մանրադիտակից,
Տուն չի եկել արևի,
Անձրևի տակից:

Եվ աճել է սերմն այդ նոր,
Արտ դարձել անասի,

Ծիածանի յոթ գույնով,
Յոթ երկնքի չափ:

Շողերն ասին.—կխանձենք,
Հնձիր, Ծովինար...

Աղջիկն ասաց.—կհնձենք,
Էլ չկա հնար...

Եվ ուզում էր նա գնար,
Բայց մեկ էլ դեմից
Մեկը կանչեց.—Ծովինար...
Չէս ճանաչում ինձ...

Վեր թռավ սիրտն աղջկա...
Նայեց նա տղին...
—Կարեն...—ասաց, աչքն ընկավ
Ոսկե աստղին:

Կարգի բերեց նա խկույն
Աղլուխը գլխի
Ու երիզեց վարդագույն
Ծոպերն աղլուխի:

—Ողջ երկիրն է հիմա քեզ
Ճանաչում,—ասաց,—
Լափին տվեց խինդն, ինչպես
Արտերը հասած:

Կարենն ասաց. — աճել ես,
Ուրախ եմ ես էլ,
Կճանաչի, թե ուզեա,
Երկիրը քեզ էլ:

— Կճանաչի՞... Բայց ինչ՞ով,
Ի՞նչ եմ ես արել,...

Մեր պապն էլ է իր խիճով
Այս հողը վարել:

Իսկ Չորուտը, հայիր, դեռ
Խոպան է, ինչո՞ւ...

Երբ մեր երկրում անպամ ժեռ
Քարն է կանաչում,

Երբ գիտեա, որ կարող ենք
Հողն այդ նվաճել...

— Իսկ բերք կա՞նք...

— Թե ուզենք,

Կարող է աճել:

Հարկավոր է լանջերին
Բողոքիսան լեռան

Անտառ գցել, որ քամին
Դեմ առնի նրան:

Որ էլ չգա, չավերի
Չորուտը, Կարեն,

Հարկաւոր է և ջրի
Համար պայքարել:

Չախլիկը պիտ ընթանա
Մեր ուղած հունով,
Այգի պիտի նա դառնա
Գեղեցիկ ու նոր:

Պիտի վառվեն ու լույս տան
Ջրերը նրա,
Արտեր դառած ծիծիան
Չորուտի վրա:

Չկա ոչինչ անհնար,
Ի ու համաձայն ես... —
— Ճիշտ ես ասում, Ծովինար,
Համաձայն եմ ես:

Տղան հուզվել էր ասեա,
Իողում էր ձայնը...
— Իսկ Սերոբին ասել էս,
Նա համաձայն է...

Լռեց աղջիկն ու մի պահ
Մթնեց, ինչպես ամպ,
Եվ ինչքանն բան ասաց նա
Իր այդ լռությամբ:

Քայլում էին նրանք հին
Մի աղբրի մոտով,
Ցամաք էր նա ու չորս դին—
Լի փշախոտով:

Ձուրը նրա իր համար
Նոր հուն էր գտել,
Հին աղբյուրը, որպես քար,
Թողնելով ետև:

«Մեր փոթորկուն կյանքն էլ նոր
Հունով է գնում,
Ով չի աճում ամեն օր,
Ով հետ է մնում,

Մի օր նա էլ պետք չի դա
Աղբրի պես այս հին»:
Այդ էր ասում աղջկա
Հայացքն այդ պահին:

— Դուր չի դալիս Սերուն ինձ,
Հետ է մնացել,
Կյանքը եկել նրանից
Առաջ է անցել:

Իսկ ով չաճի, չտոկա,
Ինչքան էլ ուղի,

Կարո՞ղ է լալ հախազան
Լինել կոլխողի:

Այսպես ահա խոսելով
Գնում են նրանք,
Լցված պայծառ հույսերով,
Սրտերում՝ բերկրանք:

Գնում են, և արտերն են
Շուրջը փսփսում,
Գուցե նրանց սրտերն են
Իրար հետ խոսում:

Ո՞վ կարող է իմանալ...
Երբ սիրան է խոսում,
Ասում են՝ այդ ժամանակ
Լռում է լեզուն:

* * *

Հնչում են ահա զանգերը կրեմլի,
Թնդում է Հիմնը գիշերվա մթնում,
Վառ երազներով և հույսերով լի
Հնձվորներն ահա խոր քուն են մտնում:

Լռում է ռադիոն, հովերն են լռում,
Եվ այդ անզորում մի խոստումնալից,

Մի պայծառ ճրագ իր լույսն է փռում,
Արթուն աչքի պես նայում մշուշից:

Պատում է ահա նա քողը մթան,
Եվ, ինչպես անմար փարոսը ծովում,
Նշում է ուղին դեպի ապագան,
Իր պայծառ լույսով հմայում, թովում:

Նստած է ահա Օսլինարն արթուն
Եվ այդ լույսի տակ, այդ կես գիշերին,
Նա «Լենինիզմի հարցերն» է կարդում,
Նշումներ անում նրա էջերին:

Բացում է գիրքը նա առաջնորդի,
Գալիքի դուռն է բացում նա ասես,
Տեսնում է այնտեղ թրթիռով սրտի
Նա կոմունիզմի ասիերը լուսի:

Տեսնում է վաղը, մտաիկն ու հեռուն,
Եվ բարձունքներն է տեսնում նա բոլոր՝
Աշխարհի բոլոր քառուղիներում
Ու ճամփաներում ոլոր ու մոլոր:

Դրսում դեռ մութ է, գիշեր է խավար,
Մենակ նրա տան ճրագն է թարթում:
Եվ այդ ուշ ժամին երազներով վառ
Նա «Լենինիզմի հարցերն» է կարդում:

Թ՛վում է գրքի էջերից պայծառ
Ձրուցում է մեծ առաջնորդն իր հետ
Եվ ուրախութ՛յամբ, սիրով մի անծայր
Նոր ուղիներ է նշում լուսավետ:
Խորհուրդներ է նա տալիս հայրաքար
Եվ լուսավորում մտքերը նրա,
Որ չիջնի երբեք բարձունքից նա վար,
Կամունիստական բարձունքից իրա:



Եղնիկասարի ուսին թիկնած,
Լուսինն արտերն էր հսկում հանգիստ,
Երբ որ Կարենը, սաստիկ հոգնած,
Տուն վերադարձավ հեռու հանդից:

Տուն վերադարձավ ուրախ, դվարթ
Ու նոր խոհերով հոգին հղի,
Բերեց նա իր հետ դարունը վարդ
Եվ թարմութ՛յունը բերեց հողի:

Եվ սիրտը դարկեց ուրիշ խանդով,
Ուրիշ հույզերով պայծառ ու ջինջ,
Անգամ Չորուտի հողերն անթով
Ժպտացին նրան մուժի միջից:

Երկինքն ավելի պայծառ թվաց,
Երեկոն խաղաղ դարմանալի,

Լակ սիրան էր նրա, հրով վառված,
Ծփուամ ծովի պես փոթորկալի:

Խոսում էր շուրջը կանաչ այգի
Հավքերի լեզվով՝ դյուլթիչ այնքան,
Բայց նա թռչում էր մտքով կրկին,
Մտնում դաշտերը անեղրական:

Արտերն էր մտնում, ուր ամեն հասկ,
Լցված էր կյանքով, խինդով անմար,
Նա, որ և՛ հաց է՛, և ուժ անհաս,
Եվ պաշտառ լույս է նա մեզ համար:

Բռնկել է ողջ հանդը բոցով,
Չուգվել դարդերով հարուստ ու պերճ,
Այն խինդն է մարդկանց դարձել է ծով,
Որ հունի սահման, որ հունի վերջ:

Եվ Ծովինարն է դեկավարել,
Օգնել գործով իր, բարի խոսքով
Նրանց, ովքեր այդ հողը վարել,
Լցրել են հանդը դեղին ոսկով:

Եվ ցույց է ավել նա դրանով,
Որ կկատարի, ինչ էլ ուզի.
Պարտքարտուղար է և աղբոսում,
Այսինքն սիրան է նա կոլխոզի,

Նրա ուղեղն է, կամքը արի,
Եվ աչքն է նրա արթուն, դպաստ,—
Կոլխոդն առանց պարտքարտուղարի—
Կամ ծովում նավակն անառազաստ:

Եվ քարտուղարն այդ նա է, որին
Դեռ դպրոցում կարենը թաքուն
Սիրել է սիրով ջերմ ու խորին
Ու եղել նրա երկրպագուն:

Աղջիկ էր երեկ նա հասարակ
Եվ սովորում էր, և հունձ անում...
Փառք մեր աշխարհին, ինչպես արագ
Փոխվում են մարդիկ ու բարձրանում:

Եվ ո՞վ չի դգում հենց իր վրա
Փոփոխութունն այդ մեծ ու խորին,
Մեր ամբողջ կյանքն է փոխել իրա
Ընթացքը, հունը իր վիթխարի:

Եվ այստեղ հիմա ամեն ինչում
Զգում ես շունչը նոր օրերի,
Որ դյութում են քեզ, քեզ հետ շնչում,
Փոփոխվում քեզ հետ օրը օրին:

Այսպես Սորհում է կարենը լուռ,
Կարծես չի տեսել ուրիշ ոչինչ—

Ոչ կռիվներ են եղել անլուր,
Ոչ պղտորվել են ջրերը ջինջ:

* * *

Նոր էր կարենը ներս մտել բակից,
Դեռ հին շորերը չէր հանել հագից,
Երբ սենյակ մտավ մեկը խնդազին:

— Կարեն ջան...

— Սերոբ...

— Անզին...

— Թանկազին...

Սարուհի եմ եղել, քո դալու մասին
Ես չգիտեի, հենց նոր ինձ ասին...
Հենց այս րոպեին ոտք դրի ես տուն... —
Արդարանում է Սերոբն ու ժպտում:

Մանկութ եղել են նրանք միասին,
Վեք են խաղացել, գնացել դասի,
Միասին հանդում ոչխար են պահել,
Զմեռը սարից սահնակով սահել:

Այսպես մեծացել, հասակ են առել,
Տրակտորիստ է կարենը դառել,
Մյուսը՝ հաշվետար, նրանց սերը ջինջ
Զի մարել ոչինչ...

Իսկ երբ հնչեցին փողերը ապամի
Եվ ահեղ բռիժը մեծ պատերազմի
Ցնցեց աշխարհը, կարենն այդ ամառ
Գնաց կռվելու մայր հողի համար:

Սերոբն էլ ուզեց, բայց նրան բերին
Գյուղում կռիտովի նախապահ դրին:
Այդ օրից անցավ հինգ երկար տարի,
Հինգ անգամ հալվեց ձյունը սարերի:

Եվ ահա նորից ընկերն անվեհեր
Կանգնած է իր դեմ, ինչպես հակա լեռ,
Նույնն է նա—սիրուն ու լայնաճակատ,
Մաղերը՝ դանդուր, ձայնը՝ թավհական:

Նույնն են աչքերը—փայլփլուն ըջուրեղ,
Բայց դարձել է նա ավելի թիկնեղ,
Ինչպես մի կաղնի պարթևասակ,
Իսկ կրծքին—փառքի վառվուռն սլասկ:

Սերոբը գրկեց կարենին նորեն,
Շնորհավորեց նրան ջերմորեն.

— Ուրախ եմ,—ասաց,—մեծ մարդ ես դառել
Բայց դալուդ մասին իմաց չես արել,

Իրանով շատ ես մեղ վերավորել...
Գյուղն ամբողջ կղար, կղխամավորել:

— Դրա համար էլ թաքուն եմ եկել,
Նեղութուն տալ ձեզ չուզեցի, մեկ էլ
Հնձի օրեր են, վճռական օրեր...

Թողնել ամեն ինչ, դալ դիմավորել...

Եվ դու կանեիր...

Քեզ համար, այո ..

— Իզուր, Սերոբ ջան, եղիր խնայող,
Իմացիր, բոպեն թանկ է մեզ համար,
Պետք է աշխատել, աշխատել համար:

Արտերն այս տարի շատ են լավ, մենակ
Ոչ մի հասկ հանդուժ չսկետք է մնա:

Խոտն էլ առատ է, հավաքիր, թեղիր...

— Բոլորը կանենք, դու հանդիստ եղիր:

Հիմա դու ի՞նչ ես մտադիր անել:

— Չեմ կարող, Սերոբ, չխոստովանել, —

Ինձ հիմա ուրիշ մի հարց է հուզում,

Այնպիսի դոբժ եմ ես հիմա ուզում,

Որ մեկի տեղ տամ հարյուր ու հազար,

Որ իր արժեքով լինի հավասար

Նրան, ինչ որ ես արել եմ մարտում:

— Իհարկե, կարեն, քեզ նման մարդուն

Հո չե՞ն ասի՝ եկ, մնա կողխողում,

Հողի, ցեխի հետ...

— Սխալ ես խոսում,

Հողից լավ չկա աշխարհում ոչինչ,
Մաքուր ու թանգ է նա ամեն ինչից:

Քրտինքը մարդու ոսկի է դարձնում,
Աթար ես տալիս—գոհար է ծնում:
Սիրում եմ հողը և նրա համար
Ես քանի ձմեռ ու քանի ամառ

Արյուն եմ թափել մարտերում դաժան
Եվ միշտ կմնամ հողից անբաժան:
Գիտե՞ս, թե ես ինչ պայծառ հույսերով,
Ինչ երազներով եկա տուն, Սերոբ:

Հողը քաշում էր, բերում էր ինձ տուն,
Հողը կանչում էր, ծիծաղում, ժպտում:
Բայց վատ ենք նայում, Սերոբ, մենք հողին,
Մեզ ուրախություն ու կյանք տվողին:

Թող Չորուտը քեզ լինի օրինակ,
Նայիր, մինչ այսօր ամայի է նա,
Դարերի փոշին մնում է վրան...
Այգեստան պիտի դարձնենք մենք նրան:

Նոր բերք պիտ աճի մեր հողի վրա,
Ապշեցնի պիտի պտուղը նրա
Իր առատությամբ, իր համով, հոտով,
Որ կախարդի քեզ, երբ անցնես մոտով:

— Ինչպէս տեսնում եմ, չես հավանում ինձ...
Ծովինարն էլ է դժգոհ ինձանից...
Մի ամիս չկա — պարտկում ենք ընտրել,
Ի՞նչ ասես, որ իմ գլխին չի դրել...
Գյուղը, ասում է, հետ է մնացել...
Հիդրոկայան է ուղում կառուցել...

— Եվ թող կառուցի... Իու դեմ ես դրան:
— Իսկ որտեղի՞ց է մեղ այդքան դրամ:
— Իրամ կլինի, եթե աշխատես:
— Վատ չեմ աշխատում, այդ ինքդ էլ գիտես:

Օրը մթնում է, ես տուն չեմ գալիս,
Շողի, ցրտի հետ կռիվ եմ տալիս,
Հանդուժն եմ լինում ես ամառ, ձմեռ,
Պատվով կատարում պլանները մեր...

— Հերոսութուն չէ, երբ կատարում ես
Իու քո պլանը, պիտի աշխատես,
Որ մենք մեկի տեղ հարցուր ստանանք,
Որ էլ ավելի մենք հարստանանք:

Այդպիսի գյուղեր շատ կան մեր երկրում.
Նայում ես — սիրտդ բացվում է, բերկրում:
Մի օր ես հրաշք մի այդի մտա,
Ռուսական փոքրիկ մի գյուղում էր դա...

Օ՛, ինչե՛ր ասես, որ այնտեղ չկար,
Մի երազ էր դա, մի չքնաղ նկար:
Ծիրանը այնտեղ ոսկե կոթ ուներ,
Խնձորը սեխի համ ու հոտ ուներ,

Մեղր էին քամում սալորի ծորից,
Կեռասը մեծ էր դեղձից, խնձորից:
Կար և մի պտուղ—դեղին ու մալի,
Համով նման էր նա շատ արմավի:

Դեպի երկինք էր ծառն այդ խոյանում,
Տերևից անգամ միրգ էր գոյանում:
Եվ միչուրինյան այդ չքնաղ այգին
Կլանեց ամբողջ իմ սիրան ու հոգին:

Միայն երեք օր եղա այդ այգում,
Բայց երեք օրն այդ, Սերոբ, իմ կյանքում
Երեք դարի էր ասես հավասար:
Այդ երեք օրում ևս երեք հազար

Բան սովորեցի ու որոշեցի,
Որ կռվից հետո, թե ողջ մնացի,
Իմ ամբողջ կյանքը նվիրեմ դրան:
Գյուղը մեր դառնա թող միչուրինյան

Մի ծաղկուն այգի, կանաչների ծով,
Հանդերը՝ ձյուլեն անուշ խշուրտով:

Ժամանակը մեզնից այդ է պահանջում:
Ինչքան հողեր կան ամայի, անջուր...

Ծովինարը մեր շատ ճիշտ է ասում,
Պիտ այգի գցենք այդ հողամասում:
Իսկ դա դժվար չէ, լսո՞ւմ ես, արի
ձեզքենք մենք կուրծքը Եղնիկասարի

Եվ մեր Չախլիկը ջրանցքով տանենք,
Հեղեղենք ամբողջ տափաստանը մենք:
Ու երբ լիովին այն օգտագործենք,
Ինչ հարկավոր է—մենք կկառուցենք:

— Կառուցենք, դեմ չեմ, բայց ավելի ուշ,
Որտեղից գտնենք հիմա այդքան ուժ:

— Կոմունիստ ենք մենք—ահա ուժը մեր,
Կոմունիստ ենք մենք, նշանակում է

Չկա մեզ համար անհնար ոչինչ,
Նշանակում է, մենք կյանքի պոչից
Գնալ չենք կարող, հասկանում ես ինձ...—

Կարենը հուզված բարձրացավ տեղից:—

Ս.մբողջ շրջանը ոտքի կհանենք,

Բայց՝ մեր ուղածը, իմացիր, կանենք:

— Իսկ ես ասում եմ պիտի համբերել...

քեզ համար սարից ոչխար եմ բերել,

Եկ գնանք մորթենք, մի լավ քեֆ անենք,
Աշխարհը մեզ հետ չպիտի տանենք:

Կարենը մի սլահ լուռ հայեց նրան,

Կարծես սառը ջուր ցանեցին վրան.

— Իսկ ո՞վ է քո այդ ոչխարի տերը...

— Մեր կուլխողինն է, այսինքն, մերը...

— Ինչ... Մերը...

— Այո, կուլխողինն է հա...

— Նշանակում է՝ ով ինչ ուզենա

Կարող է անել... իսկ ո՞վ թույլ կտա...

Իսկ հասկանում ես, որ հանցանք է դա...

Հետ տար ոչխարն այդ և տուր կուլխողին:

— Նշանակում է մենք մեր հերոսին

Պատվել չենք կարող:

— Ուրիշի հաշվին...

— Ինչո՞ւ ուրիշի... Կուլխողն ուրիշ չէ...

— Արի չվիճենք:

Ճիշտն ասած, քեզնից չէի սպասում...

Նշանակում է իզուր չեն ասում...

Կարենը լռեց: Նա էլ չէր խոսում:

Սերոբի ճակատից քրտինքն էր հոսում,

Խորհում էր հա լուռ ու մտամոլոր

Եվ պղտոր էին մտքերը բոլոր:



Անծայր հանդերի, արտերի վրա
Պահակում էր դեռ լուսինը հրակ:
Քնած էր քամին:
Եվ այդ ուշ ժամին

Խաղաղվել էին ճամփեքը բոլոր,
Երբ Սերոբը լուռ ու մտամոլոր
Դուրս եկավ փողոց:
Մի ինչ որ դողոց,

Ինչ որ սարսուռ էր մարմինը պատում
Եվ ոչինչ ասես նա չէր նկատում,
Չէր տեսնում ոչինչ,
Ոչ լուսինը ջինջ,

Ոչ ցողերն արծաթ, որոնք լուսնի տակ
Սղամանդ էին թվում ու սուտակ,
Ոչ կանաչը ճոխ,
Ոչ էլ լուսաշող

Երկինքը, որտեղ անծայր վրանում
Սեսա բանակն էր մեր հանդատանում,
Ճակատներին վառ՝
Սատղերը զվարթ:

Ամեն ինչ այնքան ջինջ էր այդ դիշեր,
Բայց նրա հոգուն մի ամպ էր իջել
Մռթ ու սեղամառ...
Եվ ինչի՞ համար,

Ի՞նչն էր Սերոբին այդպես բորբոքել,
Այն, որ ուզում են դյուղը բարվոքել,
Կառուցել ջրանցք,
Բայց մի՞թե դրանց

Կարիքը Սերոբն ինքը չգիտի,
Կամ չի հասկանում, եվ ինչո՞ւ պիտի
Դա նրան հուզի.
Մի՞թե չի ուզի

Ուրիշների պես միշտ առաջ սուրալ,
Որ կյանքը լինի ավելի ուրախ,
Ավելի պայծառ...
Որ Չորուտն անծայր

Լցվի հավքերի ու մարդկանց երգով,
Որ նա իր անուշ, իր առատ բերքով
Ու կյանքով խնդուն
Լցնի ամեն տուն:

Այն ով չի ուզի սլանալ միշտ վեր,
Ճախրել մովերում, թե արծվի թևեր

Ու սիրտ ունենաս
Բայց կարող է նա,

Լեռնային արծիվն անդամ երազել
Թռչելու մասին, եթե չի մարդել
Թևերն ու հոգին
Ցրտին ու շոգին:

Նա կծվարի լանջերին լեռան,
Իսկ լուսադադաթ բարձունքը նրան
Կթվա երազ
Հեռու և անհաս:

Սերոբն էլ այդպես չի մարդել կյանքի
Անհուն ոլորտում թևերն իր մտքի,
Որ միշտ անվեհեր
Սլանա նա վեր:

Չունի նա մտքեր պայծառ ու հաստու,
Դրա համար է, որ չի հավատում
Նա ոչ իր ուժին,
Ոչ էլ ուրիշին:

Մի միտք է հիմա նրան բորբոքում.
«Չե՞ն ասի՝ ինչո՞ւ կարենն է հոգում
Մեր մասին, իսկ դո՞ւ...
Էլ ո՞ւր ես հասում

Դու այդ աթոռին, ընկեր նախագահ,
Քանի որ հիմա քեզնից լավը կա
Նվ այն էլ՝ զինվոր...»

Այս մտքերն են, որ

Հանգիստ չեն տալիս հիմա Սերոբին,

Իրանք են այնպես պղտորել հողին

Ու սիրտը նրա:

Երկնքի վրա

Աստղերը, լուսնի շուրջը հավաքված,

Օրորվում էին: Սերոբին թվաց,

Թե այն հուր հսկան

Ոչ թե լուսընկան,

Այլ Կարենն է նա, որ հպարտ կեցած,

Հրե հայացքն իր սեռուել է ցած:

Իսկ աստղերը սեզ

Մատներն են տանք

Կոլխոզնիկների անթիվ, անհամար,

Որ ձայն են տալիս Կարենի համար:

* * *

Իսկ այդ պահին մայրը որդուն

Հորդորում էր ու նախատում.

— Դու, Կարեն ջան, զուր ես խոսում,

Ի՞նչն է պակաս մեր կոլխոզում:

Ասա, կո՞վդ եմ քշել դաշտից,
Ցորեն հանցդ է պակաս տաշտից,
Ինչի՞ հանգիստ քուն չունես դու,
Սովանձ ես, թե տո՞ւն չունես դու,

Պարտքատե՞րն է դուռդ կտրել,
Թե՞ շղթա եմ ոտքիդ դրել:
Արի, որդիս, փառք տուր ասածուն—
Ե՛վ հաց ունենա՞ք, և՛ տեղ, և՛ տուն:

Վիդ չենք ծռում մենք օտարին...
Էն արյունոտ կուլի տարին,
Թե չլիներ կոլխոզը մեր,
Ասա, մեր օրն ի՞նչ կլիներ:

Սերոբը վատ չի աշխատում,
Ջուր ես նրան դու նախատում,
Էլ ի՞նչ ասես, որ չի արել,
Մի դրախտ է գյուղը դառել.

Ունենք մենք լավ ուսումնարան,
Ունենք ակումբ, ընթերցարան,
Մանկապարտեղ, մանկամսուր,
Էլ ինչի՞ ես խոսում իդուր:

— Քիչ եմ դրանք, այդ եմ ասում...

— Իսկ քո պատը ի՞ր երազում

Շմտ էր տեսել էդպիսի բան...
Եղել է մի սարի չորան,

Կոռ է քաշել տարին բուր,
Էլի սոված, էլի տկուր...

— Իմ պապը, մայր, ճորտ և կղել,
Եվ օրենքն է նրան նեղել:

Մենք ծնվել ենք աղատ հողում,
Նրա նման չենք դողդողում
Մեք հարուստի, բեկի առաջ,
Գերի չենք մենք, ինչպես առաջ:

Չենք ծառայում մենք ուրիշին,
Դրանից է, որ մեր ուժին
Չի դիմանա և ոչ մի լեռ:
Չէ, սխալ է Սերոբը մեր:—

Խոսում էին այսպես նրանք,
Կարդում հաղար մի հորդորանք,
Իսկ գիշերը խաղաղաշունչ
Սահում էր մեղմ և անշշունչ:

Ահա լուսնի շողերն ընկան
Խալու վրա ծաղկանկար,
Բոցավառվեց ասես խալին,
Հետո ընկան մահճակալին,

Արժաթեցին ճաղերն ասես
Ու չթողին, որ սպասես.
Գրաֆինի մեջ լողացին,
Հայելու մեջ շողշողացին

Եվ ցնծությամբ, խաղով մանկան,
Լուռ բաղմոցի վրա հանդան...



Ժողով էր ակումբում, հասարակ ժողով,
Բայց ինչ որ ջերմություն մեծ ու անսովոր
Լցրել էր սրտերը մի քաղցր դողով:
Լուռթյուն էր խորին ու հանդիսավոր:

Եվ այդ պահին, լարված այդ լուռթյան մեջ,
Այն թարթող լույսերի և մուժի միջից,
Նայում էին դեմքեր լուրջ, վսեմատենչ,
Դեմքեր՝ վառված հրով և հայացքներ՝ ջինջ:

Եվ այդ մարդկանց առաջ, ժողովում այդ մեծ,
Հանդես եկավ ահա Սերոբն ու պատմեց
Իր գործերի մասին, կոլխողի մասին:
Հետո հարցեր տվին.

— Էն ինչո՞ւ, — ասին, —

Մենք էլեկտրակայան ու կինո չունենք,
— Էն ինչո՞ւ բաղանիք չենք կառուցում մենք...

— Ասա, ինչո՞ւ չունենք մենք սղոյարան...
Աղյուսի, կղմինդրի ու մեխդործարան...

Ե՞րբ պիտի ունենանք մենք փուռ, ճաշարան...

Եվ այսպես հարցերի մի ամբողջ շարան:

— Թե մեր ուժը, Սերոբ, չի՞ պատի դրան...

— Թե մենք ճորտ ենք էլի ուրիշի դռան,

Ուրիշի հարկի տակ, ուրիշի հողում...

— Թե նույն արև՞ը չի մեր գլխին շողում...

— Ինչո՞ւ ուրիշներից հետ ենք մնում մենք,

Թե բահ ու բրիչից մենք վախենում ենք:

Էլ ինչո՞ւ չպիտի մեր ուժը պատի... —

Եվ այսպես Սերոբին սեղմեցին պատին:

Իսկ երբ Ծովինարը տեղից բարձրացավ,

Հսկա դահլիճն տեսա մի պահ քարացավ:

Նա ասաց. — » Ձի հասնի ոչինչ մեր ուժին,

Եթե մեր վաստակը չտանք ուրիշին,

Եթե մենք պահպանենք ժողովրդական

Մեր բարիքը, ինչպես մենք մեր սեփական

Պարտեզը, մեր տունն ենք պահում, պահպանում

Իսկ ո՞վ չի մեր հալալ վաստակը տանում,

Ո՞ր անազնիմը այստեղ չի դալիս հնձի...

Մեկը ձու է տանում, մեկ ուրիշը՝ ձի,

Մեկին հաց ենք տալիս, մեկ ուրիշին՝ կով...
Հարց եմ տալիս. ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով,
Ո՞վ է մեզ թույլ տալիս հացը տալ գողին,
Երբ նա պատկանում է լող աշխատողին:

(Դահլիճում բարձրացավ աղմուկ ու ցատում)
Պարտիան մեզ, ընկերներ, այսպես է ասում.
Համայնական բարիքն ով չի խնայում,
Ով նրան օտարի աչքով է նայում

Եվ ով վատնում է այն ու տալիս քամուն,
Դրանով օգնում է նա մեր թշնամուն:—
Տեղերից լավեցին խանդավառ ձայներ.
— Ճիշտ է...
— Կեցցես...
— Ապրի Ծովինարը մեր...

Հետո ձայնը Ավագ ապուրը տվին:
— Հիշում եմ,—ասաց նա,—ես օրերը հին,
Երբ կոռ էինք քաշում մենք ամառ, ձմեռ,
Բայց էլի դատարկ էր լինում տաշտը մեր:

Մենք աշխատում էինք, որ բեկը ուտի,
Իսկ մարդ որ ուրիշի համար աշխատի,
Ուրիշի օջախի կրակը վառի,
Ասեք, էլ ի՞նչ սրտով հողը կվարի,

Թեկուղ ասլան լինի, թեկուղ ածդահա...
Էդտեղից է դալիս ծուլությունն անա
Նվ էն, երբ օտարի աչքով ես նայում
Վաստակիդ, երբ այն դու չես խնայում:

Իսկ հիմա, փառք ասածու, մերն է ամեն ինչ,
Մեր ձեռքերը հիմա չի կապում ոչինչ —
Ոչ կարիքը, ոչ էլ բեկը, վաշխառուն,
Ինչո՞ւ ավելի լավ չապրել աշխարհում:

Իսկ դա հո երկնքից, լուսնից չի՞ կախված,
Մեր ձեռքին է հիմա, մեղնից է կախված:
Բայց թե Սերոբի հետ քաջելու լինենք,
Կոմունիզմին, գիտեմ, ուշ կհասնենք մենք,
Թե գործի չդնենք մեծ ուժ ու եռանդ,
Ծեր եմ, վախենում եմ, չհասնեմ նրան... —

Այսպես բոլորն անկեղծ ու միաբերան
Սերոբի բացերը երևան բերին,
Հետո որոշեցին ազատել նրան,
Իսկ Կարենին բերին նախագահ դրին:

Դրդաց դահլիճը հզոր ծափերից,
Ասես ծփուն մի ծով ելավ ավերից,
Որ իր հորձանքի մեջ առավ բոլորին...
Հետո նորից ավերից լուր թյուն խորին:

Գիշեր էր: Դահլիճի կիսամշուշում,
Նավթի ճրագների աղոտ լույսի տակ,
Վառվում էին, ինչպես աստղեր վեհաշուք,
Մեղալները մարդկանց դեղին, սպիտակ:

Եվ այդ մոտ, հարազատ այդ միջավայրում,
Կարենը հիշում էր օրերն այն ահեղ,
Երբ նա այդ հասարակ մարդկանց հետ այրում,
Փլում էր թշնամու որջերն արնահեղ:

Այդ հասարակ մարդիկ, մարտիկներն այդ քաջ,
Որ կոսիլ են դաժան մարտերի հրում
Իրենց կամքը, ոգին ու դարձրել երկաթ,
Մի ահուկի ուժ են իրենց մեջ կրում:

Այդ ուժը, երկաթե այդ հեղեղն այսօր,
Թե ուղի, կդարձնի հողին հավասար
Բոլոր ամրոցները, լեռները բոլոր,
Էլ ուր մնաց ինչ որ մի Եղնիկասար:

Այդ մասին է ահա Կարենը խոսում
Լարված այդ ժողովում, և ամեն մեկին
Թվում է՝ արյան տեղ կրակ է հոսում
Երակներում իրա, բորբոքում հողին:

Սոսում է Կարենը ջրանցքի մասին,
Պլանների մասին իր այն հոյակապ,

Եվ մարդիկ հուզվում են, խնչպես մայիսին
Չախլիկի ջրերը անսանձ, խողական:

Նրանք այն առկայծող լույսերի միջից
Պարզ տեսնում են գյուղի պայծառ ապառան,
Լցվում իմաստությամբ և խոհերով ջինջ,
Սչքերում—հավատի հուրն անապական:

— Չեղ հետ, ասում է նա, մենք կապացուցենք,
Որ այն պատերազմը չի անցել իդուր,
Որ մարտերից հետո հազար անգամ մենք
Ուժեղ ենք ավելի և ավելի կուռ:

Եվ չկա մեղ համար անհնար ոչինչ,
Սշխատենք, ընկերներ, որ լիության հետ
Մեր տները մտնի լապտերն Իլիչի
Ու հնից չմնա ոչ մի արահետ,

Որ գյուղը մեր փոխվի մի այգեստանի,
Սյգուռ վրա անձրև տեղա, երբ ուղենք,
Էլեկտրականությամբ ջաղացը բանի,
Նրանով խոտ հարենք, նրանով դիզենք:

Չախլիկը կլծենք մենք մեր գութանին
Ու կասենք, հերիք է անգործ թափառես,
Եկ մեղ հետ վար արա ու մեղ հետ ցանիր,
Դու պետք է մեղ համար նոր աստղեր վառես: —

Ինչպես մթնում շողան աստղերը վճիտ,
Կամ խարույկներ վառվեն դիշերում խավար,
Այդպես կիսամոլժում հսկա դահլիճի
Փայլում էին մարդկանց աչքերն արևառ:

— Անկարելի ոչինչ չկա մեզ համար,
Ասաց Արոն, — մենակ դու մեզ կարգադրիր —
Եվ պատրաստ կլինի ջրանցքն այս ամառ.
Ասված է՝ «գեղ կանգնի — գերան կկոտրի»:

— Հավատա մեզ, կարեն, թե կարիք լինի,
Եղնիկասարը կպոկենք տեղից:
— Հրամայիր, կգնանք, հենց թեկուզ հիմի,
Հույս կբերենք գյուղը անգամ աստղերից:

Եվ այսպես միասիրտ ու միաբերան
Բոլորը խոսք տվին քաջ լեյտենանտին,
Որ կպատռեն կուրծքը դարավոր լեռան,
Ջուր կտան, կյանք կտան ծարաված հանդին:

Սերոբը, չնայած գոռոզ էր, համառ,
Բայց լսում էր սրտի անհուն մորմոքով,
Լսում էր ու տեսնում, ինչ որ իր համար
Դեռ մութ էր, ինչ առաջ չէր զգում հողով:

Մեղավոր է ինքը մի քանի հարցում,
Նա ուզում էր նույնիսկ ասել այդ մասին,

Բացատրել, որ նրանք իդուր են կարծում,
Թէ քար է Սիրուքը և չունի նա սիրտ:

Բայց հետո, խորհելով, ինքն իրեն ասաց.
— Ես դործով ցույց կտամ իմ սիրտը, հողին: —
Ու դուրս եկավ փողոց նա թեթևացած,
Կարծես ցած էր նետել մի բևեռ անաղին:



Մի ամբողջ շաբաթ Ծաղկաձորում
Ժողով էր ասես աղմկալի
Ամեն հարկի տակ, ամեն ձորում,
Աղբյուրի առաջ, հանդ ու կալին:

Կարենը ասես բոլորի մեջ
Վառել էր նոր խինդ ու նոր եռանդ,
Անցնում էր նրա անունն անվերջ
Խրճիթից-խրճիթ, բերնից-բերան.

— Կարենը էսօր գնաց շրջան...
Զրանցքի մասին պիտի խոսի...
— Կարենը քաջ է ու ժրաջան,
Պատիվն ու փառքն է նա կոլխողի:

— Կարենն, ասում են, ինժեներին
էսօր տարել է Եղնիկասար.

— Շինան յութերը արդեն բերին,
Աչքներդ լույս, Հակոբ, Նավասարդ...

Ոգելորվում են մարդիկ, խնդում
Եվ լարում նորից միտք ու մկան,
Զգում են նրանք ու հավատում,
Որ ավելի լավ օրեր կգան:

Եվ այդ հավատով խորունկ ու մեծ,
Վառված սրտերի հրով անդին,
Եղնիկասարում ահա պայթեց
Առաջին որոտն ու ժանակի:

Երերաց մի պահ շուրջը բոլոր,
Հնչեց արձագանքն անտառներում,
Եվ գազանները թավազլոր
Իրենց որջերից փախան հեռու:

Իսկ լեռան ետև, ձորամիջում,
Գետի ճերմակ ալիքներն ահա
Գլուխները հանած, ահից ճչում,
Թանչում են, փախչում խուճապահար:

Մի ուժանակ էլ ահա պոռթկաց,
Փռչին ամպի պես կախվեց օդում,
Եվ ցնծաղին կանչերը մարդկանց
Խլացան ահեղ այդ որոտում:

Կարենք հիշեց մարտերն անցած,
Արկերի որտոն այն ահարկու...
Հիշեց և, ձիուց իջնելով ցած,
Ասաց.— Տղերք ջան, լավ եք դարկում:

— Զարկելում, դիտես, վարպետ ենք մենք,—
Ասաց Ղևոնդն ու նայեց հպարտ,—
Թե չես հավատում, արի մրցենք:—
Ու տղերքն առան քլունդ ու բան,

Իրար խառնվեցին խիստ ու շառաչ,
Իջան հարվածներ հատու, ուժեղ,
Եվ հակա սարը նրանց առաջ
Թվաց՝ փոքրացավ, դարձավ մժեղ:

Փառք սովետական մարդուն անահ,
Նա ժայռ է անկոր ու վիթխարի,
Աշխատանքում աննկուն է նա,
Մարտում—անողոր ու քաջարի:



Ծռելոն ու փոշին թռխալ կապեցին
Ու պատեցին հողն անցան,
Օձ ու կարիճ, մողես ու ցին
Փախան հանդից, հեռացան:

Վայրու՛մ այդ չոր, արևակեղ
Չկար ոչ ծառ, ոչ ծաղիկ,
Բայց հա կշանք էր առել սսես
Բյուր աչքերի ծիծաղից:

Հուր այտերից ջահել կանանց,
Լաշակներից ծաղկածուխ
Կապել էր հա կարմիր-կանաչ,
Չուզվել ինչպես ծաղկոցում:

Մարդիկ, առած բահ ու քլունդ,
Տքնում էին միասին
Եվ քրտինքը ուլունք-ուլունք
Թափվում էր չոր ավաղին:

Առու էին նրանք փորում
Եվ զրուցում անուշիկ,
Թե էր տալիս, ոգևորում
Արոն սիրուն Մանուշին:

— Մանուշ ջան, Մանուշ, էն սարը վկա,
Հողից քաղցր բան աշխարհում չկա.
Հաղար Բեռլին տան, մեր այս չոր հողի,
Խոպան հողի հետ ես չէի փոխի:

Մեր հողն ուրիշ է, մեր ջուրը անուշ...
Չէ՞ որ այս հողն է ծնել քեզ, Մանուշ:

Շիկնում է Մանուշն ինչպես մի իրդ հասուն...
— Չէ՞ս հոգնել, Արո...
— Էդ ի՞նչ ես ասում...

Կարո՞ղ եմ հոգնել, երբ քեզ հետ եմ ես...
— Աշխատիր, լավ չէ, տես, նայում են մեզ...
Եվ Արոն բահը թաղում է հողում,
Աչքերում նրա կրակն է շողում,

Հույսի կրակը պայծառ, բորբոքուն,
Եվ նա տեսնում է աչքերով հողու
Վաղվա օրը լույս, գալիքը վսեմ:
— Մանուշ ջան, Մանուշ, մի բան էլ ասեմ.

Գիտե՞ս, թե ինչ եմ հիմա երազում...
Ասում եմ՝ քեզ հետ այս հողամասում,
Այս առվի ափին, երբ որ ջուրը գա,
Մենք բանջարանոց դցենք մի հսկա...

— Դեռ թող ջուրը գա, հետո կխոսենք:
— Կգա, հավատա... Էլ ի՞նչ կուխող ենք,
Որ մեր ուղածը գլուխ չբերենք:
— Դե որ այդպես է, Արո ջան, փորենք:

Ու նորից առան ցցեր ու կացին,
Նորից բահերը թափով գնդացին,

Աշխատում էին նրանք, մաքրաբուժ,
Որ շուտ ավարտեն վիթխարի առումն:

Իսկ ուրիշ խմբեր մի փոքր անդին
Հավաքում էին քարերը հանդի,
Ոգեվորության կրակը հոգում,
Մացառներն էին արմատից պոկում:

Ծովինարն ահա գլուխը հակած,
Բրեղենտե կոշտ շորերը հագած,
Ինժեների հետ քայլում է հանդով...
Շուրջը ստեպն է անսահման, անթով:

Քայլում է հանձնված իր խոր խոհերին,
Փռչի է նստել նրա շորերին,
Երեսին, գանգուր մազերին նրա:
— Ի՞նչ է պատահել, ինչի՞ ես մռալը:

— Քիչ են մեր բանող ձեռները, Վահրամ... —
Նրանք լռեցին: Եվ ինչ որ մի ամպ
Ծանրացավ ասես նրանց սրտերում:
Բայց այն ի՞նչ փռչի բարձրացավ հեռվում...

Ովքե՞ր են նրանք, որ տազնապահար,
Կարմիր մի դրոշ առջևում պահած,
Գալիս են սայլով, ձիով են գալիս,
Երգով, աղմուկով մի շանդալից՝

Ետեից փոշու ճերմակ ամպ թողած:

Ծովինարի դեմքն ասես շողշողաց.

— Կարենը չի՞ նա...

— Կարենը, ո՞րը...

— Առջևից եկող այն ձիավորը:—

— Նա ինքն է: Ի՞նչ է, չէի՞ր հավատում:—

Ծովինարը լուռ նայում էր, ժպտում:

Եվ ալ ձին տակին,

Ուրախ, խնդադին

Մտեցավ ասա Կարենը նրան,

Սրտում նոր ավյուն, աչքերում՝ կրակ,

Եվ, իջնելով ցած,

Նրա դեմ կեցած,

Ինչպես դիմավորը հրամանատարին,

Ասաց.— Ծովինար, «Հաղթության տարին»

Օգնության եկավ. տես ինչքան նա մեզ

Մարդիկ է տվել, ինչքան սայլ ու եղ:

Իսկ այն տրակտորը և այն երկու ձին

«Նոր կյանքի» մարդիկ մեզ ուղարկեցին:—

Մինչ այդ ծիծաղով, աշխուժով մանկանց,

Եկան, շարվեցին խմբերը մարդկանց—

Ահել ու ջահել, տղամարդ ու կին...

— Շնորհակալ եմ, ընկերներ անդին—

Ասաց Մովհնարն ու նորից հանդում
Թափ առավ, եսաց աշխատանքն անդուլ:

Մարդկանց սրտերը լցվեցին տապով,
Իջան բահերը, զնգացին թափով,
Տրակտորն էլ անծայր խոպանն էր հերկում,
Տնքում էր հողը, երկաթը՝ երգում:

Իսկ այնտեղ, հեռվում, սարն էր որոտում,
Մեռած դաշտերին նոր կյանք ավետում:

* * *

Գիշերն իջավ, ծվարեց
Լեռների ուսին
Ու երկնքում նա վառեց
Աստղեր ու լուսին:

Վրանները լուսնի տակ
Ճերմակին տվին,
Հանց կարապետներ սպիտակ՝
Իջած գետափին:

Տղերքն ահա խարույկի
Շուրջը բոլորած,
Լսում են ծեր Ավագի
Զրույցն անմոռաց:

Պատմում է նա անցած սև
Օրերի մասին,
Ինչ տեսել է ու լսել
Անցյալում անսիրտ:

Երկարում է գիշերը
Այդ զրույցի պես,
Ավագ ապուր հուշերը
Վերջ հունեն ասես:

Հանդերն ահա մտան քուն,
Քնեց և քամին,
Մենակ դետն է, որ անքուն,
Այդ գիշեր ժամին,

Հափին տալով, հեալով
Թանչում է մթնում,
Ժեռ քարերը լվալով,
Չորերը մտնում:

Դարեր ի վեր լեռների,
Կիրճերի միջով
Հոսել է նա ահռելի
Որոտ ու ճիչով:

Ու հոսում է դեռ անկանգ,
Դաշտերից հեռու,

Մենակ մի գոռ արձագանք
Թողած լեռներում:

Գալիս է նա հարավից
Եվ անցնում տխուր,
Շուրջը հողը ծարավից
Այրվում է, մխում:

Իսկ ջրերը լոկ լեռան
Փեշերն են լիղում,
Իրա համար էլ նրան
Չախլիկ են ասում:

Հիմա էլ դուր հասում է,
Ծեծում ափերը...
— Չախլիկի պես, — ասում է
Ավագ ապերը, —

Մարդիկ էլ կան, որ գալիս,
Անցնում են անկամ,
Ժողովրդին չեն տալիս
Մի ծղնոտ անգամ:

Մի հաշիվ է — այդպիսին
Եղած թե չեղած...
Ու խառնում է ծերունին
Կրակն անթեղած:

Ճարճատում է մի գերան,
Վառվում խարուչկում,
Իսկ Չախլիկը մի բերան
Հին երգն է երգում:

* * *

Արշալույսը բռնկվեց
Ու հազարերանգ
Իր շողերով հրդեհեց
Կատարը լեռան:

Եվ բարձրացավ նա արար
Աշխարհի վրա,
Ինչպես մեծ ու փրկարար
Դրոշը մեր ալ:

Ահաբեկեց նա վատին,
Խավարը ցրեց,
Հույս ներշնչեց վհատին,
Որբին ջերմացրեց:

Լուսավորեց ճամբաներ
Բարձր, լեռնանիստ,
Որ տանում են դեպի վեր,
Դեպի կոմունիզմ:

Եվ ճամփեքով այդ լուսե,
Առավոտ կանուխ,
Երբ երկինքը փիրուզե
Նոր էր մերկանում,

Կարենն արդեն տրակտորով
Սհեղաշառաչ,
Սրտում անհուն մի կորով,
Սուրում էր առաջ:

Առաջ, անդուլ ու անհետ...
Եվ Ծովինարի
Միտքն էր տանում նա իր հետ,
Նրա սիրտն արի:

Շող էր թափում ոսկեման
Արևը պայծառ,
Չկար ոչ ծիր, ոչ սահման
Դաշտում այդ անծայր:

Տղի ճակտից արևկա
Քրտինք էր հոսում,
Ու խոփն ասես աղջկա
Միտքն էր ակոսում:

Կանգնած դաշտում հրացող
Մենակ ու լռին,

Նայում էր նա հեռացող
Այն տրակտորին:

Ու թվում էր՝ կգնա,
Կխրվի, հանց նետ,
Երկնի կապույտ կողը նա
Ու չի դառնա ետ:

Գնում էր նա ու ետքից
Հողն էր սևանում,
Գնում էր նա, բերկրանքից
Կայծեր էր ցանում,

Որ այդ փոքրիկ կայծերից
Բռնկեն հանդում
Համատարած արտերի
Բոցերը խնդուն:

Շառաչում է տրակտորը,
Հանդում թափով,
Հեռու անտառն ու ձորը
Լցնում տազնապով:

Ու թվում է Կարենին՝
Կռիվ է նորից,
Որոտում է հրետանին
Դիմացի ձորից:

Նա թշնամուն տրորում,
Ճգնում է տանկով
Եվ առաջ է գրոհում
Խուլ գղրղանքով:

Իսկ հովիկը, չգիտես,
Հեքյաթ է ասում,
Թե անտառի սիրակեղ
Վարդից բամբասում:

Մերթ կանչում է կակաչին,
Որ սարերից դա,
Մերթ քչփչում ականջին
Ջահել աղջկա.

— Իսկ կհիշես կարոտով
Այս օրը մեկ էլ
Բախտը ինքը իր ոտով
Քո դուռն է եկել:

Ուրախացիր դու, սարի
Սիրուն մանուշակ,
Գիտես, նա քեզ կսիրի,
Սիրուն ես դու շատ:

Չես հավատում ինձ, հրեա,
Գալիս է, նայիր,

Տես, ինչպես է փնտրում քեզ
Աչքերով նա իր:

Իսկ տղային գգվելով,
Հովն ասում է.— Կաց,
Տես, ի՞նչ լավն են, ի՞նչ խելոք
Աչքերն աղջկա:

Դե, մտեցիր, խոսիր դու,
Ինչո՞ւ ես լռում,
Եվ իչնո՞ւ է քո սիրտը
Այդպես թրթռում:

Ասում է նա ու նորից
Սուրում հանդն ի վար,
Եվ իջնում է տրակտորից
Տղան խանդավառ:

Իջնում է նա ու հպարտ
Նայում իր հերկին
Եվ խնդությամբ անսպառ
Լցվում է հոգին:

Երջանիկ էր աղջիկն էլ,
Նայում էր նրան.
Հուզվել էր նա ու շիկնել
Ծաղկի պես նռան:

Սիրտն ասում էր.— Ինչ խելոք,
Ինչ լավն ես, կարեն...—
Լեզուն մի բառ ասաց լոկ.
— Շնորհակալ եմ...



Եվ մի առավոտ, երբ քնաթաթախ
Արևը նայեց Եղնիկասարից,
Տեսավ թնդում է Չորուտը թևխաղ
Հարսների ուրախ ծափ ու ծիծաղից:

Դաշտն ասես լույսի ծով է ճառագած,
Եվ մարդիկ անհոգ, ինչպես հարսանքում,
Տոնական սիրուն զգեստներ հագած,
Երգում են, պարում, նվագն է զնգում:

Եվ տարածվում է նրանց երգն ուրախ
Հեռաստաններում հեռու, հեռավոր:
Բայց ահա թնդաց մի հզոր ուռա,
Լավեցին կոչեր, կանչեր, բյուրավոր:

Երերաց հողը ու փրփրաբերան
Չախլիկը ահեղ մի դղրդյունով
Դուրս ժայթքեց կրծքից վիթխարի լեռան
Եվ առաջ սուրաց նա իր նոր հունով:

Դա խնդությունն էր ասես մարդկային,
Որ բյուր սրտերից մեկեն խլրտաց,
Ինչքան կարոտներ, երազներ կային
Ջրերի վաղքում այդ արագընթաց:

Կարենի սիրտը հուզմունքից եռում,
Լցվում է ասես արևի բոցով,
Եվ նա կարոտով նայում է հեռուն:
Շուրջը ծփում է մարդկային մի ծով:

Եվ թավալվում է առուն ավաղում,
Հոսում հանդերով անսահման, անծիր,
Արծաթին տալով, խնդալով վաղում,
Կանչում է հողին. «Դե ել, արթնացիր»:

Գալիս եմ՝ սրբեմ դարերի փոշին,
Ճակատիդ անգին գոհարներ շարեմ,
Գալիս եմ վերջ տամ քո գորշ մշուշին
Եվ բախտի հազար լուսաստղեր վառեմ:

Գալիս եմ անա հովի պես թեթե,
Ներշնչված գալիք օրերի հույսով,
Ինձ սովետական մարդը տվեց թե,
Որ գամ, հեղեղեմ դաշտերդ լույսով:

Նրա հույզերն եմ բերել ես ինձ հետ,
Հազար տենչ, հազար կարոտ ու փափագ,

Բաց դեմքդ, ժպտա, ժպտա դու հավես
Եվ թող համբուրեմ շուրթերդ պապակ:

Թող կանաչ դառնամ՝ կուրծքդ զարդարեմ,
Բարդիներ դառնամ՝ հով անեմ վրադ,
Կյանքիդ համար թող նոր հուն հարդարեմ,
Որ էլ չայրի քեզ արևը հրատ»:—

Երգում է առուն, կարկաչում զվարթ,
Երգում են ջրերն ու ծափին տալիս,
Թվում է հեռվից հազար երիվար,
Հազար փրփրաբաշ ձիեր են գալիս:

Ու հողը պահած խնդությունն իր ծով,
Կարենի ոտքն է համբուրում ասես.
— Բո սերն, ասում է, ցույց տվիր գործով,
Այժմ պահանջիր ինձնից ինչ կուզես:

Ես քեզ կտամ այն, ինչ կարող է տալ
Լոկ մայրը սրտով սիրած իր որդուն,
Քարերին անգամ կատիպեմ խնդալ,
Հեքյաթ կդարձնեմ ես կյանքը մարդու:—

Լսում է Կարենն ու հանդի վրա
Իջած արծաթե մշուշի միջից
Տեսնում է. ինչպես մի չքնաղ երազ,
Վաղվա պատկերը հեքյաթի պես ջինջ:

Աշուն է ահա, բերքառատ աշուն,
Ծփում է դաշտը եղերքից եղերք,
Ասես մի հսկա անտառ է խշշում,
Կախարդում, ինչպես չլաված մի երգ:

Եվ միչուրինյան այդ այգեստանում
Ուր որ նայում ես—ծաղիկ է ու սեղ,
Դեպի լիություն ու լույս են տանում
Ճամփեքը բոլոր և լայն, և լուսե:

Այդքան շատ աստղեր չկան երկնքում,
Այդպիսի մրդեր աշխարհում չկան,
Արևը նրանց նախշում է, զուգում,
Ինչպես որ մայրը՝ սիրած աղջկան:

Իսկ այնտեղ, այն մեծ բանջարանոցում,
Տես ինչքան սեխ կա, ինչքան ձմերուկ,
Ասես գառներ են այնտեղ արածում՝
Կորած մարդերի ծով կանաչներում:

Արևը հալվել, թափվել է հանդին,
Ճառագայթներ են բարձրացել հողից,
Խոտի տեղ լույս է հարում գերանդին,
Խուրձեր են կապում արևի շողից:

Մթնում է: Նորից աստղերն են փայլում:
Կարծես Իլիչի լամպերն են նրանք,
Որ արտացոլված երկնի հայելում,
Ցոլում են հուլիսի շողեր ու բերկրանք:

Ց ա ն կ

Գնա, թռչնակս	5
Շրկիր հայրենի	3
Գագել Ստալինյան հնգամյակի	6
Իմ մանկիկը	7
Հաղթանակի տունը	8
Բալլադ մոր և որդու մասին	9
Վերադարձ	11
Թաթուլ Հուրյանին	13
«Երջանիկ ծերուքուն» շարքից	15
Լիուքուն (պոեմ)	18



Չափա նմանում 11/IV-49. Չափ քաղ 2,51. Ուրիւնք քաղ 2,95.
 ՓԳ 00236 Տիփարիք 1124. Տիրաք 3000.

Ազերբայճան ՏՏՐ ՈՏ յանդա Քոլիգրափիա ղՅ Ուրիւնք
 Իքլերի Իդարեսի, «Գիզիլ Տերգ» մեթբեսի,
 Բաքի, Իզի Ասլանով կւճ., № 80

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043906

[174]

A I
7932

1 р. 70.коп.

САМВЕЛ ГРИГОРЯН
ФИРАВАН ԿԵՅԻՆ

Баки – АЗЭРНӘШР – 1949